

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՁԱՆԱԳՐԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի ԹԻՎ 39 ԱՐՁԱՆԱԳՐԱՅԻՆ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջներով Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 6-ի «Անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի և հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման կապակցությամբ ազդեցության ենթարկված անձանց լրացուցիչ փոխհատուցման մասին համաձայնագրի օրինակելի ձևերին հավանություն տալու մասին» թիվ 39 արձանագրային որոշման (այսուհետ՝ Արձանագրային որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները.

1. Արձանագրային որոշման վերնագրում «ԱՆՇԱՐՇ ԳՈՒՅՔԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ» բառերից առաջ լրացնել «ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ, ՕՏԱՐՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» բառերը:

2. Արձանագրային որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3-րդ և 4-րդ ենթակետերով.

«3) Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» պետական ոչ առևտրային կազմակերպության և քաղաքացիների, իրավաբանական անձանց ու համայնքների միջև կնքվելիք անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի օրինակելի ձևին՝ համաձայն N 3 հավելվածի:

4) Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» պետական ոչ առևտրային կազմակերպության և քաղաքացիների, իրավաբանական անձանց ու համայնքների միջև կնքվելիք օտարման կապակցությամբ ազդեցության ենթարկված անձանց լրացուցիչ փոխհատուցման մասին համաձայնագրի նախագծին՝ համաձայն N 4 հավելվածի:

3.Արձանագրային որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2-րդ կետով:

«2. Սույն արձանագրային որոշման 1-ին կետով նախատեսված պայմանագրերով, համաձայնագրերով կարգավորվող հարաբերությունների առանձնահատկություններից ելնելով, պայմանագրերի, համաձայնագրերի կնքման ընթացքում առաջացած նոր իրավահարաբերությունները արդյունավետ կարգավորելու նպատակով, պայմանագրերի, համաձայնագրերի օրինակելի ձևերի էական պայմանների պահպանմամբ, կարող են կնքվել այլ պայմաններով պայմանագրեր, համաձայնագրեր:

3.Արձանագրային որոշումը լրացնել նոր թիվ 3, 4 հավելվածներով՝ համաձայն հավելված N 1, N 2:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Հայաստանի Հանրապետության  
կառավարության

----- թիվ

արձանագրային որոշման

«Հավելված N 3  
ՀՀ կառավարության 2011 թ.  
հոկտեմբերի 6-ի նիստի N 39  
արձանագրային որոշման

## ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Երկու հազար տասներկու թվականի \_\_\_\_\_

ՀՀ, ----- մարզ, ք. \_\_\_\_\_  
Վաճառողներ՝ համասեփականատերեր՝ \_\_\_\_\_, հաշվ. \_\_\_\_\_ շրջ. գ.  
\_\_\_\_\_, անձ. \_\_\_\_\_ տրվ. \_\_\_\_\_-ից, \_\_\_\_\_, հաշվ. գ. \_\_\_\_\_,  
անձ. \_\_\_\_\_ տրվ. \_\_\_\_\_ թ. \_\_\_\_\_-ից, \_\_\_\_\_, հաշվառված  
շրջ.գ. \_\_\_\_\_, անձ. \_\_\_\_\_ տրվ. \_\_\_\_\_ թ. \_\_\_\_\_-ից /այսուհետ.  
Վաճառող և/կամ Վաճառողներ/:

Գնորդ՝ Հայաստանի Հանրապետություն, ի դեմս Հայաստանի Հանրապետության  
տրանսպորտի և կապի նախարարության, որի անունից հանդես է գալիս «Հյուսիս-հարավ  
ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն»  
պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս լիազոր անձ \_\_\_\_\_ -ի  
/լիազորագիր տրված \_\_\_\_\_-ին, գլխավոր գործադիր տնօրեն \_\_\_\_\_  
կողմից/ անձնագիր \_\_\_\_\_, տրված \_\_\_\_\_ թ., \_\_\_\_\_-ի կողմից, բնակության վայրը  
\_\_\_\_\_, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա.

Կնքեցին սույն Պայմանագիրը հետևյալի մասին.

#### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Վաճառող(ներ)ը վաճառում են, իսկ Գնորդը որպես սեփականություն ձեռք է բերում  
անշարժ գույք (այսուհետ «Օբյեկտ»), որը բաղկացած է \_\_\_\_\_ / \_\_\_\_\_ / քառակուսի  
մետր (հա) մակերեսով հողամասից (լոտ-կոդ \_\_\_\_\_):

1.2 Օբյեկտը գտնվում է ՀՀ \_\_\_\_\_ մարզի \_\_\_\_\_ համայնքի  
վարչական տարածքում:

1.3 Օբյեկտը սեփականության իրավունքով պատկանում է Վաճառողին, որը հաստատվում է  
ՀՀ կառ. առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ----- տարածքային

ստորաբաժանման կողմից \_\_\_\_\_ 2012թ. տրված \_\_\_\_\_ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականով:

1.4 Վաճառողը երաշխավորում է, որ Օբյեկտը վաճառված, գրավ դրված, վարձակալության կամ անհատույց օգտագործման տրված կամ այլ կերպ ծանրաբեռնված չէ երրորդ անձանց իրավունքներով, վեճի առարկա չէ և արգելանքի տակ չի գտնվում, ինչը հավաստվում է թիվ US-\_\_\_\_\_ միասնական տեղեկանքով, տրված՝ \_\_\_\_\_ 2012 թ. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի \_\_\_\_\_ ստորաբաժանման կողմից:

1.5 Վաճառողները միասին և յուրաքանչյուր Վաճառող առանձին սույնով հաստատում և հավաստում են, որ իրենցից բացի այլ անձինք չունեն որևէ գույքային իրավունք Օբյեկտի նկատմամբ և, որ սույն Պայմանագրի կնքման համար որևէ այլ անձանց համաձայնություն չի պահանջվում, իսկ նման պահանջ լինելու դեպքում նշված համաձայնությունը կամ համաձայնությունները համարվում են պատշաճ ստացված:

1.6 Վաճառողները հաստատում և հավաստում են, որ սույն Պայմանագրի կնքման օրվա դրությամբ Օբյեկտի տիրապետման և օգտագործման հետ կապված որևէ հարկային, կոմունալ և/կամ այլ վճարման որևէ պարտավորություններ չունեն:

## **2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Վաճառողն իրավունք ունի, եթե՝

2.1.1 Գնորդը ժամանակին չի վճարել սույն Պայմանագրին համապատասխան հանձնված Օբյեկտի համար՝ պահանջել վճարելու Օբյեկտի համար նաև տոկոսներ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 411 հոդվածին համապատասխան.

2.1.2 Գնորդը սույն Պայմանագրի խախտմամբ հրաժարվում է Օբյեկտն ընդունելուց և դրա համար վճարելուց՝ իր ընտրությամբ պահանջել վճարելու Օբյեկտի համար կամ հրաժարվելու Պայմանագիրը կատարելուց:

2.2 Վաճառողը պարտավոր է՝

2.2.1 Պայմանագիրը կնքելուց \_\_\_\_\_ օրվա ընթացքում, հանձնման-ընդունման ակտով Գնորդին հանձնել Օբյեկտը:

2.2.2 Օբյեկտը հանձնելու հետ միաժամանակ Գնորդին հանձնել դրա պատկանելիքները, ինչպես նաև դրան վերաբերվող փաստաթղթերը.

2.2.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Օբյեկտ.

2.2.4 Մինչև սույն Պայմանագրի կատարումը ծագած հիմքով երրորդ անձանց կողմից Օբյեկտն առգրավելու դեպքում հատուցել Գնորդի վնասները.

2.2.5 Եթե երրորդ անձինք մինչև Պայմանագրի կատարումը ծագած հիմքով հայց են հարուցում Օբյեկտն առգրավելու մասին, Գնորդին մասնակից դարձնել գործի քննությանը.

2.2.6 Գնորդից համապատասխան և հիմնավոր գրավոր պահանջ ստանալու դեպքում՝ 10 /տաս/ բանկային օրվա ընթացքում փոխհատուցել Գնորդի կողմից կատարված ծախսերը կապված Վաճառողի կողմից սույն Պայմանագրի 1.6 կետով սահմանված պարտավորության խախտման հետ:

2.3 Գնորդն իրավունք ունի՝

2.3.1 Հրաժարվել սույն Պայմանագիրը կատարելուց, եթե Վաճառողը հրաժարվում է հանձնել վաճառված Օբյեկտը սույն Պայմանագրի 2.2.1 կետում նախատեսված ժամկետում:

2.3.2 Օբյեկտի պատկանելիքները և փաստաթղթերը սույն Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չհանձնելու դեպքում՝ հրաժարվել Օբյեկտից.

2.3.3 Եթե Վաճառողը Գնորդին հանձնել է սույն Պայմանագրի 1-ին կետին չհամապատասխանող Օբյեկտ, պահանջել հանձնելու համապատասխան Օբյեկտը կամ հրաժարվել հանձնված Օբյեկտից կամ դրա համար վճարելուց, իսկ եթե Օբյեկտի համար վճարել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը.

2.3.4 Պահանջել Վաճառողին փոխհատուցելու իր կողմից կատարված ծախսերը՝ կապված Վաճառողի կողմից սույն Պայմանագրի 1.6 կետով սահմանված պարտավորության խախտման հետ:

2.4 Գնորդը պարտավոր է՝

2.4.1 Օբյեկտի նկատմամբ իրավունքը գրանցել համապատասխան լիազոր մարմնում սույն Պայմանագրի նոտարական վավերացումից հետո 30 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.2 Վճարել Օբյեկտի արժեքը սույն Պայմանագրի 3-րդ կետում նախատեսված կարգով, ժամկետներում և գումարի չափով.

2.4.3 Վաճառողից Օբյեկտն ընդունել հանձնման-ընդունման ակտով:

### 3. ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ ԵՎ ԳԻՆԸ

3.1 Վաճառողները վաճառում են, իսկ Գնորդը գնում է Օբյեկտը \_\_\_\_\_ / \_\_\_\_\_ / ՀՀ դրամով /այսուհետ՝ Գին/, որը Վաճառողները պետք է ստանան սույն Պայմանագրով սահմանված կարգով: Օբյեկտի գինը որոշված է Կողմերի և համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 16-ի N 1274-Ն որոշմամբ հաստատված Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի հողերի օտարման և տարաբնակեցման շրջանակին և փոխհատուցման սկզբունքներին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 6-ի թիվ 1139-Ն որոշմամբ հաստատված Տրանշ-2 (Աշտարակ-Թալին) ճանապարհահատվածի հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրին:

Օբյեկտի համար վճարվող Գինը վճարվում է առանց պահումների կամ մասհանումների, եթե այլ բան նախատեսված չէ սույն Պայմանագրով: Օբյեկտի օտարման հետ կապված օտարվող սեփականության սեփականտիրոջ համար պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից այդ կապակցությամբ առաջացող ֆինանսական պարտավորությունները (հարկեր, տուրքեր, պարտադիր վճարներ) հատուցում է Գնորդը:

3.2 Սույնով Վաճառողները հաստատում և հավաստում են, որ համաձայն են սույն Պայմանագրի 3.1. կետում սահմանված Գնին, իսկ նշված Գնի գումարի բաժանումը Վաճառողների միջև վերջիններիս կողմից համաձայնեցված է, ընդ որում չափի և/կամ ստացման եղանակի մասով Վաճառողները կամ որևէ Վաճառող որևէ պահանջ կամ բողոք Գնորդի նկատմամբ չունի: Գնորդի կողմից սույն Պայմանագրի 3.3 կետով սահմանված կարգով Գնի վճարումը համարվում է Գնի պատշաճ վճարում բոլոր Վաճառողներին/համասեփականատերերին:

3.3 Գնորդը՝ Պայմանագիրը կնքելու պահից, ոչ ուշ, քան \_\_\_\_\_ բանկային օրվա ընթացքում Վաճառողի ստորև նշված հաշվարկային հաշվին միանվագ փոխանցում է Օբյեկտի վաճառքի գնի գումարը.

h/h \_\_\_\_\_

\_\_\_\_\_ քանկ

3.4 Պայմանագիրը կնքելու, ձևակերպելու և գրանցելու հետ կապված բոլոր ծախսերի համար վճարում է Գնորդը:

#### **4. ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ**

4.1 Օբյեկտի նկատմամբ Գնորդի սեփականության իրավունքը ծագում է լիազոր պետական մարմնում այդ իրավունքի գրանցման պահից:

#### **5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

5.1 Կողմերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն Պայմանագրով սահմանված կարգով պատասխանատվություն են կրում սույն Պայմանագրով իրենց պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

5.2 Կողմերի՝ սույն Պայմանագրով սահմանված պատասխանատվության դրույթներն ուժի մեջ են մնում անժամկետ:

#### **6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ**

6.1 Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրելու պահից և գործում է մինչև Կողմերի՝ սույն Պայմանագրով նախատեսված իրենց պարտավորությունների կատարումը, բացառությամբ սույն Պայմանագրի 1.5 և 1.6 կետերի, 2.2.6 և 2.3.4 ենթակետերի, 5.1, 5.2 և 6.1 կետերի, որոնք ուժի մեջ են մնում անժամկետ:

#### **7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այսպիսիք են համարվում ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով սահմանված իրավիճակները:

#### **8. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

8.1 Սույն Պայմանագրի բոլոր լրացումները և փոփոխությունները կամ լուծումը կատարվում են Կողմերի գրավոր համաձայնությամբ:

8.2 Վաճառողները սույն Պայմանագրով տալիս են իրենց համաձայնությունը Գնորդին՝ սույն Պայմանագրի 3.1. կետում նշված Գնից իրենց հասանելիք մասը փոխանցելու Օբյեկտի համասեփականատեր \_\_\_\_\_ քանկային հաշվեհամարին և Գնորդի նշված կետով սահմանված պարտավորությունը համարվում է կատարված բոլոր համասեփականատերերի նկատմամբ: Սույն Պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

8.3 Սույն Պայմանագիրը նոտարի կողմից բարձրաձայն ընթերցվել է կողմերին և պարզաբանվել գործող օրենսդրության նորմերը:

8.4 Սույն Պայմանագիրը ենթակա է գրանցման 30 աշխատանքային օրվա ընթացքում անշարժ գույքի պետական կադաստրի տարածքային ստորաբաժանումում:

8.5 Սույն պայմանագրով չկարգավորվող դրությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՎԱՃԱՌՈՂՆԵՐ/ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐ՝

ԳՆՈՐԴ՝

Հայաստանի Հանրապետություն

Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և

կապի նախարարություն

Գործակալ՝ «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք

ներդրումային ծրագիր իրականացնող

կազմակերպություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն

Լիազոր անձ՝ \_\_\_\_\_

Հասցե՝ Երևան 0010, Նալբանդյան 28

Արարատքանկ ԲԲԸ

h/h-15100 0901786 0100 ՀՀ դրամ

ՀՎՀՀ02708921

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Հայաստանի  
Հանրապետության  
կառավարության

----- թիվ  
արձանագրային որոշման

«Հավելված N 4  
ՀՀ կառավարության 2011 թ.  
հոկտեմբերի 6-ի նիստի N 39  
արձանագրային որոշման

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ

ՀԱՄԱՁԱՅԱՆԳԻՐ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՏԱՐՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ  
ԱՆՁԱՆՑ ԼՐԱՑՈՒՅԻՉ ՓՈՒՇԱՏՈՒՑՄԱՆ  
ՄԱՍԻՆ

կնքման վայրը

կնքման ամսաթիվը

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև 12.10.2009 թ.-ին կնքված Վարկային Համաձայնագրի (Վարկ Թիվ 2561-ARM(SF)) և ՀՀ կառավարության կողմից 16.09.2010 թ.-ին ընդունված թիվ 1274-Ն որոշման, 06.09.2012թ.-ին ընդունված թիվ 1139-Ն որոշման, 06.09.2012թ.-ին ընդունված թիվ 1140-Ն որոշման պահանջներով, կողմերը կնքեցին սույն համաձայնագիրը /այսուհետ՝ համաձայնագիր/ հետևյալի մասին.

1. Սահմանումներ
  - 1.1 ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ՝ անշարժ գույքը, որը կազմված է \_\_\_\_\_ մարզ, \_\_\_\_\_ համայնքում գտնվող \_\_\_\_\_ ք.մ. ընդհանուր մակերեսով հողատարածքի (կադաստրային կոդ \_\_\_\_\_) մասը կազմող \_\_\_\_\_ ք.մ մակերեսով հողակտորից (կադաստրային կոդ \_\_\_\_\_), որը ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ սեփականատեր ԱԵԱ-ի կողմից օտարվում է ՁԵՆՔԲԵՐՈՂԻՆ՝ Կողմերի միջև կնքված պայմանագրով:
  - 1.2 ԱԵԱ՝ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ օտարման կապակցությամբ, համաձայն ՀՀ կառավարության կողմից 06.09.2012թ. -ին ընդունված թիվ 1139-Ն որոշման, ազդեցության ենթարկված անձիք, որոնք նշված են սույն կետում՝

անուն, ազգանուն/իրավ. անձի անվանում	Ծննդյան թիվ, անձնագրային տվյալներ/իրավ. անձի պետական գրանցման վկայական	ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ նկատմամբ իրավունքի տեսակը

1.3 ԱԵԱ-ների ԲԱՆԿԱՑԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՑՄԱՆՆԵՐ

Ստացողի անուն, ազգանուն/իրավ.անձի անվանում	Բանկային վավերապայմաններ	ՓՈՒՇԱՏՈՒՑՄԱՆ համապատասխան բաժին
		դրամ
		դրամ



- 1.4 ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՁԵՌՔԲԵՐՈՂ՝ Հայաստանի Հանրապետություն  
ՓՈԽՀԱՏՈՒՑՈՂ՝ Հայաստանի Հանրապետություն  
ԿՈՂՄ կամ ԿՈՂՄԵՐ՝ յուրաքանչյուր Կողմ՝ առանձին, և ԱԵԱ-ն ու ՓՈԽՀԱՏՈՒՑՈՂԸ՝ միասին
- 1.5 ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ՝ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ օտարման կապակցությամբ ԱԵԱ-ին, համաձայն ՀՀ կառավարության 06.09.2012թ.-ի թիվ 1139-Ն որոշման տրվող լրացուցիչ փոխհատուցում: ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄԸ ներառում է հատուցում հետևյալի համար.

ա.	Հողօգտագործում	դրամ
բ.	Չգրանցված շինություններ	դրամ
գ.	Բերքի/մշակաբույսերի կորուստ	դրամ
դ.	Ծառերի կորուստ	դրամ
ե.	Խաղողի այգի	
զ.	Ձեռնարկատիրական գործունեության մշտական կամ ժամանակավոր դադարեցում	դրամ
է.	Զբաղվածության մշտական կամ ժամանակավոր կորուստ	դրամ
ը.	Օժանդակություն խիստ ազդեցությունների դեպքում (գյուղատնտեսական հողի 10%-ի և ավելի կորուստ)	դրամ
թ.	Օժանդակություն վերաբնակեցման դեպքում	դրամ
ժ.	Օժանդակություն սոցիալապես խոցելի անձանց (ընտանիքի անապահովության համակարգում հաշվառված տնային տնտեսություններ/միայնակ կանանց կամ կենսաթոշակառուների կողմից ղեկավարվող տնային տնտեսություններ)	դրամ
ի.	Տրանսպորտային ծախսեր/կենսաապահովման նպաստ	դրամ
լ.	ՀՕՏ չնախատեսված ազդեցություններ, եթե այդպիսիք լինեն	դրամ

ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ընդհանուր գումարը կազմում է \_\_\_\_\_ / \_\_\_\_\_ / ՀՀ դրամ:

## 2. ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ

- 2.1 Սույնով ՓՈԽՀԱՏՈՒՑՈՂԸ պարտավորվում է վճարել ԱԵԱ-ին ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ գումարը, սույն համաձայնագրի կետ 1.3-ում նշված բանկային հաշվեհամար(ներ)ին՝ նշված համապատասխան բաժիններով՝ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ պայմանագիրը կնքելու օրվանից \_\_\_\_\_ բանկային օրվա ընթացքում:
- 2.2 Սույնով ԱԵԱ-ն հաստատում է, որ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄԸ ներառում է ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ օտարման հետ կապված ԱԵԱ-ին հասանելիք բոլոր տեսակի հատուցումները ամբողջությամբ և, որ համաձայն է սույն համաձայնագրի կետ 1.5-ում նշված ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ գումարի հետ և չունի դրա նկատմամբ որևէ առարկություններ կամ բողոքներ:
- 2.3 ԱԵԱ-ն հաստատում է, որ սույն համաձայնագրի կետ 1.3-ում նշված ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ գումարի ստացողները և նրանց բաժինները որոշված են իրենց կողմից:

## 3. ԱԵԱ-ի երաշխիքները.

- 3.1 ԱԵԱ-ն երաշխավորում է, որ սույն համաձայնագրի կետ 1.3-ում նշված անձանցից բացի չկան որևէ այլ անձիք, որոնք ունեն ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄԸ կամ դրամի մասը ստանալու իրավունք և երաշխավորում է, որ երբորդ անձանց կողմից պահանջներ ներկայացնելու դեպքում պատասխանատվությունը կկրի ԱԵԱ-ն՝ անկախ դրա բնույթից, ժամկետից, ծավալից և հիմնավորվածությունից:
- 3.2 ԱԵԱ-ն պատասխանատվություն է կրում իր կողմից տրված կեղծ երաշխիքների համար և պարտավորվում է փոխհատուցել ՓՈԽՀԱՏՈՒՑՈՂԻՆ բոլոր տեսակի ծախսերը և վնասները, որը կկրի ՓՈԽՀԱՏՈՒՑՈՂԸ ԱԵԱ-ի կողմից կեղծ երաշխիքներ և/կամ տեղեկատվություն տրամադրելու հետևանքով:

4. **ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ գործողության սահմանները և իրավական հիմքը**

4.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

4.2. Սույն համաձայնագիրը կազմված է \_\_ (\_\_\_) օրինակից, որոնցից մեկական օրինակ տրվում է յուրաքանչյուր ԱԵԱ-ին և ՓՈՒՆՀԱՏՈՒՑՈՂԻ ԿՈՂՄԻՑ ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁԻՆ:

Սույն համաձայնագրով ԱԵԱ-ի լրացուցիչ փոխհատուցում ստանալու իրավունքը ծագում է սույն համաձայնագրի 1.1 կետում նշված ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ օտարման պահից: ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ սեփականատեր հանդիսացող ԱԵԱ-ի և ՁԵՌՔԲԵՐՈՂԻ միջև կնքված ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ սեփականության օտարման պայմանագրի պայմանների չկատարումը կամ անպատշաճ կատարումը, ինչպես նաև պայմանագրում նշված ցանկացած հիմքով պայմանագրի լուծումը, իսկ օրենքով սահմանված պահանջների չպահպանման հիմքով՝ պայմանագրի անվավերությունը հիմք է հանդիսանում ՓՈՒՆՀԱՏՈՒՑՈՂԻ սույն Համաձայնագրով ԱԵԱ-ին փոխհատուցում տրամադրելու պարտավորության չկատարման համար: Անշարժ գույքի օտարման պայմանագրի լուծման դեպքում սույն Համաձայնագիրը համարվում է լուծված:

Սույն կետի պահանջները և հնարավոր հետևանքները կգործեն և կկիրառվեն նաև այն ԱԵԱ-ների նկատմամբ, որոնք սույն համաձայնագրի 1.5 կետի համաձայն համարվում են փոխհատուցման իրավունք ունեցող ԱԵԱ-ներ, սակայն չեն հանդիսանում 1.1 կետում նշված ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ սեփականատերեր/համասեփականատերեր: Համաձայնագիրը սույն կետով սահմանված հիմքով լուծվելու դեպքում ԱԵԱ-ին տրամադրված փոխհատուցման միջոցները, ենթակա կլինեն ՓՈՒՆՀԱՏՈՒՑՈՂԻ կողմից հետ գանձման:

4.3 Սույն համաձայնագրով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ

5. **Կողմերի վավերապայմանները**

\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

6. **Կողմերի ստորագրությունները**

6.1 ՁԵՌՔԲԵՐՈՂ/ՓՈՒՆՀԱՏՈՒՑՈՂԻ անունից՝

«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, որը գործում է ՁԵՌՔԲԵՐՈՂ/ՓՈՒՆՀԱՏՈՒՑՈՂԻ անունից համաձայն գործակալության համաձայնագրի և իր կանոնադրության:

«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» պետական ոչ առևտրային կազմակերպության անունից համաձայն լիազորագրի հանդես է գալիս \_\_\_\_\_-ը /լիազորագիր տրված \_\_\_\_\_/

\_\_\_\_\_  
ստորագրություն

6.2 ԱԵԱ՝

\_\_\_\_\_/որի անունից համաձայն լիազորագրի/կանոնադրության/օրենքի հանդես է գալիս \_\_\_\_\_-ը/

\_\_\_\_\_  
ստորագրություն

\_\_\_\_\_/որի անունից համաձայն լիազորագրի /կանոնադրության/օրենքի հանդես է գալիս \_\_\_\_\_-ը /

\_\_\_\_\_  
ստորագրություն

## ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 39 արձանագրային որոշման մեջ լրացում կատարելու մասին» արձանագրային որոշման նախագիծը ընդունման

ՀՀ կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 6-ի թիվ 1140-Ն որոշման 4-րդ կետով ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությանը հանձնարարվել է Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի շրջանակներում , նույն որոշման 1-ին կետով նախատեսված հողամասերի և դրա վրա տեղակայված անշարժ գույքի ձեռքբերման նպատակով օտարվող հողի և դրա վրա տեղակայված անշարժ գույքի սեփականատերերի հետ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել համապատասխան պայմանագրեր:

Նկատի ունենալով, որ նշված պայմանագրերով , որ ձեռք բերող հանդիսանալու է Հայաստանի Հանրապետությունը, ի դեմս ՀՀ կառավարության, ուստի նշված արձանագրային որոշմամբ առաջարկվում է հաստատել կնքվելիք պայմանագրի (համաձայնագրի) օրինակելի ձևը:

## Ց Ա Ն Կ

Իրավական ակտերի, որոնց հիման վրա կամ որոնցից օգտվելով մշակվել է ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 39 արձանագրային որոշման մեջ լրացում կատարելու մասին» արձանագրային որոշման նախագիծը

Սույն արձանագրային որոշման նախագիծը մշակվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 39 արձանագրային որոշման մեջ լրացում կատարելու մասին» արձանագրային որոշման նախագծի ընդունման կապակցությամբ 2012 պետական բյուջեում ծախսերի և եկամուտների ավելացման կամ նվազեցման մասին

Սույն արձանագրային որոշման նախագծի ընդունումը Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում էական ավելացում կամ նվազեցում չի առաջացնում:

## Ց Ա Ն Կ

ՀՀ կառավարության ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 39 արձանագրային որոշման մեջ լրացում կատարելու մասին» արձանագրային որոշման նախագծի հեղինակների

Սույն արձանագրային որոշման նախագիծը մշակվել է Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության կողմից:

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 39 արձանագրային որոշման մեջ լրացում կատարելու մասին» արձանագրային որոշման նախագիծը ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտության կամ բացակայության մասին

Սույն արձանագրային որոշման նախագծի ընդունումը այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջացնում: